ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ araratcity@mail.am

ՈՐՈՇՈՒՄ

<<18>> դեկտեմբերի 2013 թվականի N 16

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ. ԲՅՈՒՋԵԻ
ԵԿԱՄՏԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ, 34-րդ հոդվածի 1-ին կետերի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով.

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է՝ /որոշում 16 /

1. Պակասեցնել՝

1.1/ -համայնքի բյուջեի եկամուտները 2629,2 հազ. դրամ՝ նույն թվում համայնքի բյուջեի եկամուտները պետական տուրքերի մասով 400,0 հազ. դրամ, ն/թ նոտարական ծառայությունների մասով՝ 400,0 հազ. դրամ՝ սահմանելով վերջինիս եկամուտները 4300,0 հազ. դրամ, իսկ պետական տուրքերի ընդհանուր եկամուտները սահմանել 5800,0 հազ. դրամ՝ սահմանելով բյուջեի ընդհանուր եկամուտները 444866,645 հազ. դրամ:

ա. -1112.51 <<Պահուստային ֆոնդեր>> ծրագրի 4891 <<Պահուստային ֆոնդ>> հոդվածը 2225,2 հազ. դրամ

բ. - 0111.51 <<Պետական կառավարում>> ծրագրի 4251 <<Շենքերի և շինությունների ընթացիկ նորոգում և պահպանում>> հոդվածը 1997,5 հազ. դրամ՝ սահմանելով վերջինիս ծախսային պլանը՝ 25452, 5 հազ. դրամ:

1.2/ - 0661.51 <<Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների ծրագրի

ա. 4232 <<Համակարգչային ծառայություններ>> հոդվածը 25,5 հազ. դրամ:

բ. 4261 <<Գրասենյակային նյութեր>> հոդվածը՝ 500,0 հազ. դրամ

գ. 4262 <<Գյուղատնտեսական ապրանքներ>> հոդվածը՝ 100,0 հազ. դրամ

դ. 4267 <<Կենցաղային և հանրային սննդի նյութեր>> հոդվածը՝ 55,0 հազ. դրամ

Ընդամենը պակասեցում՝ 680,5 հազ. դրամ:

2. Ավելացնել՝

2.1/ 0111.51 <<Պետական կառավարում>> ծրագրի

ա. 4213 <<Կոմունալ ծառայություններ>> հոդվածը 120,0 հազ. դրամ՝ սահմանելով վերջինիս ծախսային պլանը 350,0 հազ. դրամ:

բ. 4252 <<Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում>> հոդվածը 350,0 հազ. դրամ՝ սահմանելով վերջինիս ծախսային պլանը 1350, 0 հազ. դրամ:

Սահմանել <<Պետական կառավում>> ծրագրի ընդհանուր պլանը 84317,7 հազ. դրամ:

2.2/ 0661.51 <<Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ>> ծրագրի՝

ա. 4111 <<Աշխատավարձ>> հոդվածը 1452,0 հազ. դրամ՝ սահմանելով վերջինիս ծախսային պլանը՝ 59332,0 հազ. դրամ

2.3/ 4212 <<Էներգետիկ ծառայություններ>> հոդվածը 82,0 հազ. դրամ՝ սահմանելով ծախսային պլանը 3338,1 հազ. դրամ:

2.4/ 4252 <<Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում>> հոդվածը 120,0 հազ. դրամ՝ սահմանելով վերջինիս ծախսային պլանը՝ 2120,0 հազ. դրամ:
Սահմանել ծրագրի ծախսային պլանը 76694,6 հազ. դրամ
3.Ավելացնել՝
0922.51 <<Հանրակրթական ուսուցում>> ծրագրի 4637 <<Ընթացիկ դրամաշնորհներ պետական ոչ առևտրային կազմակերպություններին>> հոդվածը 150.0 հազ. դրամ՝ սահմանելով վերջինիս ծախսային պլանը 310,0 հազ. դրամ, իսկ ծրագրի ծախսային պլանը 610,0 հազ. դրամ:
4. Սահմանել համայնքային բյուջեի ընդհանուր ծախսային պլանը 444866,645 հազ. դրամ:
5. Քաղաքապետին՝ կազմել նոր նախահաշիվներ և ժամանակացույց:

ԿՈՂՄ (10)

1. ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ
2. ՀԵՆՐԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ
3. ԱՐՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
4. ԿԱՐԵՆ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
5. ԱՋԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ
6. ՄԱՐՏԻՆ ՆԱԴԱՐՅԱՆ
7. ԻԼՅԻՉ ՇԱԴՅԱՆ
8. ՄԱՐՏԻՆ ՕՐԴՈՅԱՆ
9. ԺԱՆՆԱ ՏԵՐ-ԱՆՏՈՆՅԱՆ
10. ԿԱՄՈ ՍԱՐԳՍՅԱՆ

ԴԵՄ (1)
ավագանու անդամ՝

1 ԱՐԿԱԴԻԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հ. ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ araratcity@mail.am

ՈՐՈՇՈՒՄ

<<18>> դեկտեմբերի 2013 թվականի N 17-Ն

2014Թ. ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԹԻՎ 1, 2, 3 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-ՆԵՐ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ <<ԱՐՎԵՍՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ-ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՀՈԱԿ ՀԱՃԱԽՈՂ ՍԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ, 34-րդ հոդվածի 3-րդ կետերով և համայնքի ավագանու Կանոնակարգով.

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է՝ /որոշում-17-Ն/

1. Համայնքի ավագանու 02.12.2011թ. թիվ 4/47 որոշումը՝ թիվ 1, թիվ 2, թիվ 3 մանկապարտեզ ՀՈԱԿ-ներ հաճախող երեխաների համար 3500 դրամ տարեկան սահմանված ծնողական վճարը 2014թ. համար թողնել անփոփոխ:
2. Համայնքի ավագանու 03.04.2008թ. թիվ 4/8 որոշումը՝ «Ղազարոս Սարյանի անվան միջնակարգ - մասնագիտական արվեստի դպրոց» ՀՈԱԿ հաճախող սաների համար տարեկան սահմանված ծնողական վճարները 2014թ. համար թողնել անփոփոխ:

1. Դաշնամուրի և ջութակի բաժին I – VII դասարանների համար - 40000դրամ
2. Դաշնամուրի և ջութակի բաժին VIII - XI դասարանների համար - 65000դրամ
3. Ակորդեոնի բաժին I – V դասարանների համար - 25000դրամ
4. Նկարչական բաժին I -- V դասարանների համար - 20000դրամ
5. Պարի բաժին - 20000դրամ

ԿՈՂՄ (11)

1. ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ
2. ՀԵՆՐԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ
3. ԱՐՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
4. ԿԱՐԵՆ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
5. ԱԶԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ
6. ՄԱՐՏԻՆ ՆԱԴԱՐՅԱՆ
7. ԻԼՅԻՉ ՇԱԴՅԱՆ
8. ԱՐԿԱԴԻԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ
9. ՄԱՐՏԻՆ ՕՐԴՈՅԱՆ
10. ԺԱՆՆԱ ՏԵՐ-ԱՆՏՈՆՅԱՆ
11. ԿԱՄՈ ՍԱՐԳՍՅԱՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ araratcity@mail.am

ՈՐՈՇՈՒՄ

<<18>> դեկտեմբերի 2013 թվականի N 18-Ն

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔՈՒՄ 2014Թ. ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ, 34-րդ հոդվածի 2-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով.

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է՝ /որոշում-18-Ն/

Արարատ քաղաքում 2014թ. համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների /այդ թվում՝ ոչ հիմնական/ շինարարության, վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, բարեկարգման աշխատանքները /բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ իրականացնելու նպատակով շինարարության թույլտվության, իսկ ոչ հիմնական շինարարությունների մասով՝ տեղադրման թույլտվության համար, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝

ա/ հիմնական օբյեկտների համար՝ մինչև 300մ² ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի /այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200մ² ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար – 15,0 հազ. դրամ, այլ օբյեկտների համար՝ 201մ² մինչև 500մ² - 30,0 հազ. դրամ

501 մ² մինչև 1000 մ² - 50,0 հազ. դրամ
1001մ² մինչև 3000 մ² - 50,0 հազ. դրամ
3001մ² և ավելի - 100,0հազ. դրամ

բ/ ոչ հիմնական շինությունների տեղադրման համար /մինչև 20 մ² ընդհանուր մակերես ունեցող օբյեկտներ/ - 3,0 հազ. դրամ, 20 մ² և ավելի մակերես ունեցող օբյեկտների համար - 5,0 հազ. դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով չի նախատեսվում կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն - 3,0 հազ. դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար - 5,0 հազ. դրամ:
4. Համայնքում կազմակերպված մրցույթներին և աճուրդներին մասնակցելու համար սահմանել տեղական վճար - 3,0 հազ. դրամ:
5. Համայնքի տարածքում ոգելից խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել 4,5 հազ. դրամ.
6. Համայնքի տարածքում ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել 3,0 հազ. դրամ:
7. Համայնքի տարածքում բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ 1քմ-ի համար:
7.1 Համայնքի տարածքում պտուղ բանջարեղենի վաճառքի համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար չսահմանել:
8. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին /սաունաներին/ և խաղատներին ժամը 24ՠ -ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը տարվա համար սահմանել.
ա/ առևտրի օբյեկտների համար - 25,0 հազ. դրամ
բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար - 50,0 հազ. դրամ
գ/ բաղնիքների /սաունաների/ համար - 200,0 հազ. դրամ
դ/ խաղատների կազմակերպման համար - 500,0 հազ. դրամ
ե/ շահումով խաղերի կազմակերպման համար – 250,0 հազ. դրամ
զ/ վիճակախաղերի կազմակերպման համար - 100,0 հազ. դրամ
9. Համայնքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու համար տեղական տուրք տարվա համար չսահմանել:
10. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝
ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար – 2,0 հազ. դրամ;
բ/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար – 3,0 հազ. դրամ;
գ/ այլ արտաքին գովազդի համար - 800 դրամ;
դ/ դատարկ գովազդային վահանակների համար - 700 դրամ:
11.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել - 1,0 հազ. դրամ :
12.Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների ծառայություն իրականացնելու թույլտվության համար/ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 10,0հազ. դրամ:
13.Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 150,0 հ. դրամ:
ա/խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 30,0 հազ. դրամ:
14. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել - 50,0 հազ. դրամ:
15. Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
ա/ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 5000 դրամ
բ/ ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1000 դրամ:

16. Համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 60,0 հազ. դրամ:

ԿՈՂՄ (10)

1. ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2. ՀԵՆՐԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

3. ԱՐՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

4. ԿԱՐԵՆ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

5. ԱՋԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ

6. ՄԱՐՏԻՆ ՆԱԴԱՐՅԱՆ

7. ԻԼՅԻՉ ՇԱԴՅԱՆ

8. ԱՐԿԱԴԻԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

9. ՄԱՐՏԻՆ ՕՐԴՈՅԱՆ

10. ԺԱՆՆԱ ՏԵՐ-ԱՆՏՈՆՅԱՆ

ԴԵՄ (1)

1. ԿԱՄՈ ՍԱՐԳՍՅԱՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ araratcity@mail.am

ՈՐՈՇՈՒՄ

<<18>> դեկտեմբերի 2013 թվականի N 19

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2014Թ. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետի և 27-րդ հոդվածի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու Կանոնակարգով

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է՝ /որոշում-19/

Արարատի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատավարձը 2014թ. համար սահմանել ամսեկան 215000 /երկու հարյուր տասնհինգ հազար/ դրամ:

ԿՈՂՄ (11)

1. ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ
2. ՀԵՆՐԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ
3. ԱՐՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
4. ԿԱՐԵՆ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
5. ԱԶԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ
6. ՄԱՐՏԻՆ ՆԱԴԱՐՅԱՆ
7. ԻԼՅԻՉ ՇԱԴՅԱՆ
8. ԱՐԿԱԴԻԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ
9. ՄԱՐՏԻՆ ՕՐԴՈՅԱՆ
10. ԺԱՆՆԱ ՏԵՐ-ԱՆՏՈՆՅԱՆ
11. ԿԱՄՈ ՍԱՐԳՍՅԱՆ

Հ. ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ araratcity@mail.am

ՈՐՈՇՈՒՄ

<<18>> դեկտեմբերի 2013 թվականի N 20

2014Թ. ՀԱՄԱՐ ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ, 32-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով.

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է՝ /որոշում-20/

1.Հաստատել Արարատի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքը 2014թ. համար: /Հավելված 1, կցվում է/:
2.Հաստատել Արարատի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2014թ. համար: /Հավելված 2, կցվում է/:

ԿՈՂՄ (11)

1. ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ
2. ՀԵՆՐԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ
3. ԱՐՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
4. ԿԱՐԵՆ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
5. ԱՋԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ
6. ՄԱՐՏԻՆ ՆԱԴԱՐՅԱՆ
7. ԻԼՅԻՉ ՇԱԴՅԱՆ
8. ԱՐԿԱԴԻԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ
9. ՄԱՐՏԻՆ ՕՐԴՈՅԱՆ
10. ԺԱՆՆԱ ՏԵՐ-ԱՆՏՈՆՅԱՆ
11. ԿԱՄՈ ՍԱՐԳՍՅԱՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ araratcity@mail.am

ՈՐՈՇՈՒՄ

<<18>> դեկտեմբերի 2013 թվականի N 21

2014Թ. ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿՆԵՐԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ և 32-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով.

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է՝ /որոշում-21/

1.Հաստատել «Արարատի քաղաքային կոմունալ ծառայություն» բյուջետային հիմնարկի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2014թ. համար: / Հավելված 3, կցվում է/:

2. Հաստատել <<Արարատի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն>> բյուջետային հիմնարկի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2014թ. համար:

/ Հավելված 4, կցվում է/:

ԿՈՂՄ (11)

1. ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____
2. ՀԵՆՐԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ _____
3. ԱՐՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____
4. ԿԱՐԵՆ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ _____
5. ԱՋԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ _____
6. ՄԱՐՏԻՆ ՆԱԴԱՐՅԱՆ _____
7. ԻԼՅԻՉ ՇԱԴՅԱՆ _____
8. ԱՐԿԱԴԻԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ _____
9. ՄԱՐՏԻՆ ՕՐԴՈՅԱՆ _____
10. ԺԱՆՆԱ ՏԵՐ-ԱՆՏՈՆՅԱՆ _____
11. ԿԱՄՈ ՍԱՐԳՍՅԱՆ _____

Հ. ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ araratcity@mail.am

ՈՐՈՇՈՒՄ

<<18>> դեկտեմբերի 2013 թվականի N 22-Ն

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՈՐՄԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետի, 60-րդ հոդվածի պահանջներով և համայնքի ավագանու Կանոնակարգով.

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝ /որոշում-22-Ն/

1.Արարատ քաղաքում և ՈԿՖ բանավանում հաշվառում ունեցող և /կամ/ բնակվող յուրաքանչյուր բնակչի կենցաղային աղբահանության վճարի չափը 2014թ. համար սահմանել 190 /հարյուր իննսուն/ դրամ:

2.Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար

ա/ ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար սահմանել 3000 /երեք հազար/ դրամ

բ/ ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար սահմանել 5000 /հինգ հազար/ դրամ

3. 2014թ. համար <<Արարատ քաղաքի կոմունալ ծառայություն>> ԲՀ-ի կողմից բազմաբնակարան շինության պահպանման պարտադիր նորմերի կատարումը ապահովելու նպատակով սահմանել ամսական 7 /յոթ/ դրամ վճար՝ շինության նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձանց զբաղեցրած ընդհանուր մակերեսի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար:

4. Քաղաքապետին՝ աշխատակազմի և կոմունալ ձեռնարկության աշխատողների հետ համատեղ մշակել կոմունալ ձեռնարկության և բնակիչների միջև կնքվող 2014թ. պայմանագրի օրինակելի ձևը, հետևել դրանց կնքման գործընթացին և այն գործողության մեջ դնել 2014թ. հունվարի 1-ից:

ԿՈՂՄ (11)

1. ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____
2. ՀԵՆՐԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ _____
3. ԱՐՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____
4. ԿԱՐԵՆ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ _____

5. ԱՋԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ _____

6. ՄԱՐՏԻՆ ՆԱԴԱՐՅԱՆ _____

7. ԻԼՅԻՉ ՇԱԴՅԱՆ _____

8. ԱՐԿԱԴԻԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ _____

9. ՄԱՐՏԻՆ ՕՐԴՈՅԱՆ _____

10. ԺԱՆՆԱ ՏԵՐ-ԱՆՏՈՆՅԱՆ _____

11. ԿԱՄՈ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ araratcity@mail.am

ՈՐՈՇՈՒՄ

<<18>> դեկտեմբերի 2013 թվականի N 23

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ 2014Թ. ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի պահանջներով և համայնքի ավագանու կանոնակարգով

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝ /որոշում-23/

1. 2014թ. համայնքի ավագանու հերթական նիստերը հրավիրել համաձայն հետևյալ ժամանակացույցի՝

2014թ. հունվարի 23-ին
2014թ. մարտի 20-ին
2014թ. մայիսի 22-ին
2014թ. հուլիսի 24-ին
2014թ. սեպտեմբերի 25-ին
2014թ. նոյեմբերի 20-ին
2014թ. դեկտեմբերի 18-ին

3. Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի, քաղաքապետը կամ նրա պաշտոնակատարը իր կամ ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ, անհրաժեշտության դեպքում, կարող են հրավիրել ավագանու արտահերթ նիստ:

ԿՈՂՄ (11)

1. ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ
2. ՀԵՆՐԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ
3. ԱՐՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
4. ԿԱՐԵՆ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
5. ԱԶԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ
6. ՄԱՐՏԻՆ ՆԱԴԱՐՅԱՆ
7. ԻԼՅԻՉ ՇԱԴՅԱՆ
8. ԱՐԿԱԴԻԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ
9. ՄԱՐՏԻՆ ՕՐԴՈՅԱՆ
10. ԺԱՆՆԱ ՏԵՐ-ԱՆՏՈՆՅԱՆ
11. ԿԱՄՈ ՍԱՐԳՍՅԱՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՀԱՅԿՅԱՆ